ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ Է ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՀԱՑՈՒԹՅԱՆ ԽԱՆԴԱՎԱՌ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ

«ՊՐԱՎԴԱ»-ն գրում է.

«Օրերս հանդիսավոր պայմաններում Կարմիր Բանակի զրահատանկային և մեքենայացված զորքերի հրամանատարի ներկայացուցիչը N տանկային զվարդիական զորամասին հանձնեց «Սասունցի Դավիթ» տանկային շարասյունը։

Ամբողջ անձնակազմի բարձրաձայն «ուռայի» հնչյունները ծածկում են զորամասի հրամանատարի երդման խոսքերը։

— Ընդունելով մեր զորամասի շարքը տանկային շարասյունը, որ կրում է հայ ժողովրդի լեգենդար Հերոս Սասունցի Դավթի անունը,— ասաց նա,— մենք էլ ավելի ցասումնալից կջախջախենք գերմանական զավթիչներին և կբազմապատկենք Կարմիր Բանակի տանկային զորքերի փառքը»։

«Սովետական Հայաստան» օրաթերթը գետեղում է «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան նկարը «Արտասահմանյան հայությունը ակտիվորեն օգնում է Կարմիր Բանակին» վերնագրի տակ, իսկ «Սասունցի Դավիթ տանկային շարասյունը» հոդվածի մեջ գրում է.

«Հայրենական պատերազմի առաջին իսկ օրից սովետական մյուս ժողովուրդների հետ միասին ռուս մեծ ժողովրդի գլխավորությամբ ֆաշիզմի դեմ մղվող պայքարում մեկ մարդու պես ոտքի կանգնեց նաև հայ ժողովուրդը։

«Նա իր հաղարավոր զավակներին զենք տվեց և պայքարի ուղարկեց իր որերիմ ու դարավոր թշնամու՝ գերմանական զավթիչների դեմ հանուն Մեծ Մխիթյան, փառքի ու ազատության, հանուն ազատ ու երջանիկ մայր Հայաստանի։

«Հայ ժողովրդի զավակները ռազմի դաշտում, թշնամու դեմ մղվող պայքարում հաղարապատկեցին մեր քաջարի նախնիների հերոսական ռազմական փառքը։ Իրենց խիզախության համար մոտ 10·000 հայ մարտիկներ ու սպաներ պարգևատրվել են Սովետական Միության շքանշաններով և մեդալներով։

«Սովետական Միության հերոսների խիզախ ընտանիքում կան մոտ 30 հայ հերոսներ։ Ստալինյան գեներալիտետի շարքերում իրենց պատվավոր տեղն են գրավում 35-ից ավելի հայ գեներալներ, որոնք սովետական դնդերն առաջնորդում են հաղթական պայքարի։

«Սովետական բոլոր ժողովուրդները մեծ սիրով և հարգանքով են խոսում բանակի գեներալ Ստալինյան հմուտ զորավար Բաղրամյանի մասին։

«Իրենց աշխատանքային սխրագործություններով ռազմաճակատից հետ չեն մնում աշխատանքային ճակատի մարտիկները։ Պատերազմի տարիներին էլ ավելի աճեց և հզորացավ Սովետական Հայաստանի արդյունաբերությունը, նա պատվով է

կատարում ռազմաճակատի պատվերները Կարմիր Բանակին տալով զենք, զինամթերք, հանդերձանք:

«Լավագույն հաջողությունների համար Սովետական Հայաստանի կոլխոզնիկները, որոնք իրենց անձնվեր աշխատանքով Կարմիր Բանակին և երկրին տալիս են գյուղատնտեսական մթերքներ և արդյունաբերությանը՝ հումք: Սովետական կառավարությունը բարձր գնահատեց Հայաստանի կոլխոզային գյուղացիության աղնիվ աշխատանքը և մոտ 400 առաջավորների պարգևատրեց Սովետական Միության շքանշաններով և մեդալներով:

«Ռազմաճակատի համար, հաղթանակի համար իր ամբողջ ուժը, եռանդն ու ընդունակությունները են նվիրել հայ ինտելիգենցիան, հայ գիտնականները, գրողները, արվեստի և կուլտուրայի մարդիկ:

«Հայրենական պատերազմի առաջին իսկ օրից սովետական հայրենիքի պաշտպանության համար ոտքի կանգնեցին նաև արտասահմանյան հայերը: Նրանք բոլոր միջոցներով օժանդակում են սովետական ժողովրդին ու Կարմիր Բանակին արագացնելու ֆաշիզմի ջախջախումը: Բավական է միայն հիշատակել այն փաստը, թե ինչպես մեծ արձագանք գտավ ամենայն հայոց կաթողիկոսի տեղակալ Գեվորգ արքեպիսկոպոս Զեորեքչյանի 1943 թվի հունվարի կոչը արտասահմանյան հայերի մեջ կատուցելու «Սասունցի Դավիթ» անունով տանկային շարասյուն:

«Աշխարհի բոլոր մասերում բնակվող հայերը բարձր խանդավառությամբ սկսեցին մուծումներ կատարել «Սասունցի Դավիթ» տանկային շարասյուն կառուցելու համար: Ամենակարճ ժամկետում Ամերիկայի հայերը հավաքեցին 95·600 դոլար, Թավրիզի հայերը 120·000 ռիալ, Սպահանի հայերը 30·000 թուման, Ֆրեզնոյի (Կալիֆորնիա) հայերը 10·000 դոլար, Բեյրութի հայերը (Երիտասարդական միությունից) 100 ֆունտ ստերլինգ, Կիպրոսի հայերը 3·000 ֆունտ ստերլինգ և ուրիշներ:

«Հավաքված դրամով սովետական տանկային գործարաններում ամենայն հայոց կաթողիկոսության պատվերով կառուցվեց «Սասունցի Դավիթ» տանկային շարասյունը:

«1944 թ. փետրվարի 29-ին հանդիսավոր պայմաններում N տանկային գվարդիական գորամասին հանձնվեց Սասունցի Դավիթի անվան տանկային շարասյունը:

«Այդ տանկերն այժմ գտնվում են ռազմաճակատում, Կարմիր Բանակի փորձված և հմուտ մարտիկների ձեռքում:

«Սասունցի Դավիթ» տանկային շարասյան հզոր տանկերը այժմ իրենց ծանր թրթռուրների տակ ճզմելով գերմանական գազանիչներին, հաղթականորեն շարժվում են դեպի արևմուտք:

«Սասունցի Դավիթ» տանկային շարասյան մուտքը Կարմիր Բանակի շարքերը մի նոր լավագույն վկայություն է արտասահմանյան հայերի սիրո և համակրանքի դեպի սովետական հայրենիքը. դա սովետական բոլոր ժողովուրդների հետ միասին թշնամու դեմ նրանց պայքարի ու հաղթանակի հաստատ որոշման ապացույցն է...

«Հայ ժողովուրդը էլ ավելի կլարի իր ուժերը արագացնելու գերմանական ֆաշիզմի վերջնական ջախջախումը»: